№ 60 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 19 1903 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 19 № 60

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամն (բացի կիրակի եւ տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գարնան հեղեղներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ի միջի այլոց. Օպերային ներկայացումները. Գաւառական բեմը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատկերներ Րաֆֆիի կեանքից.

ԳԱՐՆԱՆ ՀԵՂԵՂՆԵՐԸ

Այս տարի ձմեռը ձիւնառատ էր և լեռներում ներկայումս մեծ քանակութեամբ դեռ անհալ ձիւն է մնացել: Ենթադրում են, որ գարնան ջրերը շատ պէտք է լինեն, գետերը պէտք է խիստ յորդանան, հեղեղները պէտք է ընդարձակ տարածութիւն բռնեն: Թիֆլիսը միջոցներ է ձեռք առնում պաշտպանելու Սաղի Թաղը, որ առաջին զոհն է լինում հեղեղների: Գօրու գաւառում առանձին հսկողութիւն է սահմանված Լեախվա գետի ափերի վրա: Ուրիշ տեղերում նոյնպէս երկիւղներ կան, որ գարնան ջրերը կարող են քայքայումներ և աւերումներ առաջ բերել: Անկասկած, եթէ ձիւների հալքը կատարվի աստիճանաբար, այն ժամանակ ջրերը կը յորդանան որոշ յաջորդականութեամբ և վնասներ տեղի չեն ունենայ: Բայց եթէ գարունը, որ առանց այն էլ այս տարի ուշացել է, միանգամից մտնի իր իրաւունքների մէջ և տեղի ունենան յորդ անձրևներ, այն ժամանակ աւերները անխուսափելի են:

Հեղեղներ միշտ եղել են մեր երկրում՝ թէ անցեալ դարերում և թէ մեր ներկայ ժամանակ: Գաւառական յիշատակարաններում մենք յաճախ հանդիպում ենք հեղեղների նկարագրութեան կամ համառօտ յիշատակութեան: Մեր երկրի լեռնային դիրք ունենալը ստեղծում է հեղեղներ գոյանալու համար նպաստաւոր պայմաններ: Բայց պէտք է մի և նոյն ժամանակ անհերքելի համարել և այն, որ առաջվայ ժամանակները հեղեղները այնքան մեծ, խիստ և յաճախ չէին լինում, ինչպէս վերջին տասնեակ տարիներում: Շատ տեղերում, ուր հեղեղը համարվում էր միայն մի հազուագիւտ բացառութիւն, միայն ծերերի պատմուածքների մի յիշատակութիւն, այժմ յաճախ կրկնվում են նրանք և քարուքանդ են անում հարիւր տարիներով գոյութիւն ունեցող այգիներ, պարտէզներ և գիւղեր:

Հեղեղների սաստկանալու և յաճախ կրկնվելու պատճառներից մէկը անտառների ոչնչացնելն է մեր երկրում: Այնտեղ, ուր մի քանի տասնեակ և մի քանի հարիւր տարիներ սրանից առաջ կանգնած էին հրաշալի կուսական անտառներ, այժմ հողը բացվել է, ամայացել և զրկվել ծառային բուսականութիւնից: Ձիւնի և անձրևի ջրերը, որոնք առաջ ամբարվելով անտառի մէջ, կամաց կամաց իջնում էին ձորերը և աստիճանաբար յորդացնում գետերը, այժմ չունենալով ոչ մի արգելք, յանկարծակի և ուժով թափվում են բարձրութիւնից դէպի ձորերի հուները և կազմելով մեծ հոսանքներ, հեղեղում ջրի ընթացքի շուրջ գտնվող հողերը և աւերում տներ և բուսականութիւն: Եւ որքան աւելի է մեծանում անտառազուրկ տեղերի տարածութիւնը, այնքան աւելի խստանում է հեղեղների աւերմունքը մեր երկրում:

Հեղեղների դէմ մաքառման հարցը վաղուց է յարուցված Կովկասում, բայց այն օրվանից դէսը ոչ միայն չէ պակասում անտառների ոչնչացումը, այլ օրէցօր նա աւելի և աւելի ընդարձակ ծաւալ է ստանում: Իսկ մաքառման միւս միջոցները դեռ բոլորովին սաղմնային վիճակի մէջ են:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Իշխան Ճավճավաձէի բրօշիւրը «Հայոց գիտնականների մասին» այնպիսի հռչակ է սկսում ստանալ, որին նա երբէք արժանի չէր ոչ մի կողմից: Վրացիներից այդ բրօշիւրը ռուսերէնի է թարգմանել է պ. Ալէքսէեվ-Մեսխիեվ: Ոչ ոք, ի հարկէ, մի առանձին երևոյթ չէր համարի այդ պառաւական բամբասանքների և ազգամոլական վայնասունների թարգմանութիւնը, եթէ թարգմանիչը մի մեծ վեհանձնութիւն և բարեգործական առանձին եռանդ ցոյց տուած չը լինէր, գրելով իր թարգմանութեան վրա, թէ իւրաքանչիւր վաճառված օրինակից 5 կոպէկ յատկացնում է ուսանողներին օգնող ընկերութեան: Ահա այդ հինգ կոպէկներն էլ ստեղծեցին բրօշիւրի հռչակը: Ի՞նչ տեսակ հռչակ է դա: Մեր ընթերցողները լաւ ծանօթ են նրա հետ: Գիտենք, որ ուսանողներին օգնող ընկերութեան ընդհանուր ժողովը պիտի վճռէ՝ ընդունել այդ 5 կոպէկները, թէ ոչ: Այս անգամ մենք ուրախութեամբ արձանագրում ենք, որ «Новое Обозрѣніе» լրագրի աշխատակից պ. Լ. Կիպիանի, ազգով վրացի, բացարձակ յայտնում է, որ չը պէտք է ընդունել պ. Մեսխիեվի նուիրած 5 կոպէկները: Պ. Կիպիանի յօդուածը շատ գեղեցիկ տպաւորութիւն է թողնում իր լայն, համամարդկային հայեացքներով: Ինչպէս յայտնի է, Վէլիչկօի, Նիկօզօսօվի և այլ այսպիսի մարդկանց լօգիկան այն է, թէ իրանք—այդ պարոնները ոչինչ չունեն հայ ժողովրդի դէմ, միայն հայ ինտելիգենցիան են համարում չարիք, որի դէմ պէտք է կռուել: Նոյն այս փարիսեցիական դիմակի տակ էր մտել և իշխան Ճավճավաձէն: Նա էլ այն է ասում, թէ հայ ժողովուրդը լաւ ժողովուրդ է, բայց նրա գիտնականներն են հրէշներ: Այս մի և նոյնը կրկնեց անցեալներում և բրօշիւրի թարգմանիչ Մեսխիեվ: Բայց այդ դիմակը շատ թափանցիկ էր և ոչ ոք չը հաւատաց նրան: Պ. Կիպիանի գրում է.

—Ես ափսոսում էի, որ այն մարդը (Ճավճավաձէ), որի բանաստեղծական ուժեղ տաղանդի առաջ ես պատանեկութեան տարիներից սովորել եմ երկրպագել, որի անխորտակելի, երկաթէ լօգիկայի վրա ես զարմացել եմ բազմաթիւ ժողովներում,—կարող էր մի հրապարակախօսական բրօշիւրի մէջ այն աստիճան ենթարկվել ազգայնական անհամբերողութեան զգացմունքին, որ բարձր ձայնով տալիս է իր հակառակորդին այնպիսի անուններ, որոնք իրանց նշանակութեամբ և մտքով չեն համապատասխանում հրապարակախօսական լուրջ ոճին:

Դա առաջին անտակտութիւնն էր: Երկրորդ անտակտութիւնը ռուսերէն թարգմանութիւնն էր, որ կատարված է առանց կրճատումների, առանց որ և է ծանօթութեան, կատարեալ սքանչացումով դէպի մի գործ, որ պարզապէս ատելութեան ոգով է գրված:

Եւ ինչո՞ւ համար է բարձրացրած ապականված և խեղտուկ փոշու այս ամպը: Միայն նրա համար, որ ապացուցվի, թէ մենք, վրացիներս, ծագում ենք փառաւոր ուրարտացիներից, թէ հայերը ուրարտացիների հետ ազգակցութիւն ունենալու ոչ մի իրաւունք չունեն: Եւ սա այն ուրարտացիների հետ, որոնք ապրում էին Քրիստոսից հինգ դար առաջ: Տէր Աստուած: Եւ այս պատճառով բարդացնել կեանքը, խլացնել իր մէջ «բարի զգացմունքները», ամեն ինչ իրար խառնել, տակն ու վրա անել և մերձաւորների հետ ունեցած յարաբերութիւնների մէջ մտցնել այն անհեթեթ խառնաշփոթութիւնը, որի մէջ այլ ևս չէ կարելի գտնել և ճանաչել հասարակական հանգամանք ունեցող մի քանի հետքն անգամ:

Այո, այսպէս են այն մարդիկ, որոնք ներկայի մէջ ոչինչ չունեն անելու, բացի չարախօսելուց, մարդկանց սիրտն ու արիւնը պղտորելուց: Տեսնենք, ուսանողներին օգնող ընկերութիւնը կը հասկանա՞յ այն բարձր գաղափարը, որի վրա հիմնում է պ. Կիպիանի իր այդ խօսքերը...

Ի ՄԻՋԻ ԱՅԼՈՑ

«Новое Время» լրագիրը, ինչպէս յայտնի է, ռուսական լայնատարած կոլօնիաների ամենաթունդ բարեկամներից և համակրողներից մէկն է: Յայտնի է նոյնպէս, որ լրագրի անկեղծ և բուռն ցանկութիւնները, մասնաւորապէս, վայելում է և Կովկասի ազգաբնակութիւնը, որի բարգաւաճութեան համար, ըստ կարելոյն չափ, ոչ մի ջանք չէ խնայել Սուվօրինի այն պատերազմական շտաբը, որը զուտ հայրական խնամքից դրդված, պարբերաբար պատժական արշաւանքներ է ուղարկում Կովկասում տիրող աւազակութիւնների դէմ:

Առաջ, որքան յիշում ենք, Սուվօրինի և ընկ. օրհնութեամբ կովկասակերութեան նպատակով կազմակերպված պատժական դաստիարակչա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՐԱՖՖԻԻ ԿԵԱՆՔԻՑ

(Շարունակութիւն)

Րաֆֆին ոգևորված ուզում էր աւելի երկար խօսել, բայց ես նրա խօսքը կտրեցի, նկատել տալով, որ նուագարանն սկսվում է: Այդ միջոցին նա դիմեց Ալի աղային, խնդրելով, որ երգել տայ իր այն քաջ որդու վրա հիւսված դիւցազներգութիւնը, որ ընկած էր կռւի դաշտում որպէս հերոս: Ալի աղան թէև դժկամակելով ընդունեց, բայց պատուիրեց, որ անմիջապէս սկսեն: Լեռնային մուղան քրդական պարզ լեզուով սկսեց երգել քաջ տղամարդի պատերազմական քաջագործութիւնները ոտանաւոր անգերով ջութակի ձայնի ընկերակցութեամբ, այնպէս ոգևորված, այնպէս ներդաշնակ, որ ոչ միայն լսելու արժանի էր, այլ և ամբողջ երգվածը արձանագրելու: Ահա մի պատառ այդ հովւական—լեռնական երգվածից, որ քիւրդ երգիչները յօրինել են ի պատիւ իրանց ցեղապետ իշխանի որդու:

«Դու չես մեռած, Ահմէդ աղա, քո գործերը շատ մեծ են,
Քանի որ կայ քո որդին, դու կը մնաս միշտ անմոռաց:
Նա կը մեծանայ, ձի կը հեծնէ, ձի կը հեծնէ զէնքը ձեռին,
Եւ կը լուծէ հօր վրէժը, դու կը լինես անմահացած:
Վէրքը կուրծքիդ մեռար, Ահմէդ աղա, պարծանք ցեղիդ:

Դիւցազնական հիւսուածքի բովանդակութիւնը այնքան երկար էր և այնքան յափշտակիչ, որ անզգալի կերպով տևել էր մինչև ուշ գիշեր, իսկ մենք անշարժ նայում էինք որպէս քարացած մարդիկ և չէինք նկատել, որ որդեկորոյս Ալի աղան վրանից վաղուց դուրս էր գնացել իր հետևորդներով տխուր տպաւորութեան տակ: Երբ լռեց քրդական խօրը, նրա ծառաներից մէկն ասաց մեզ, որ իշխանը ամբողջապէս չը կարողացաւ լսել այդ տխրալի երգվածը, որ ամեն մի բառում յիշեցնում էր նրան իր սիրելի քաջ որդուն: Նա վրանից հեռացաւ արտասուքն աչքերում: Նա երբէք թոյլ չէ տալիս, որ իր ներկայութեամբ այդ հիւսուածքը երգեն, այս գիշեր բացառաբար միայն նա ընդունեց, որովհետև դուք խնդրել էիք: Մի ուրիշ ծառայ էլ ասաց. «Այո, քաջերը չեն ուզում լսել դառն մրմունջներ և կսկծալից արտայայտութիւններ»: Մենք հարցնելով իմացանք, որ ցեղապետը առանձնացել է Զօլախի եզերքում, վրանից ոչ այնքան հեռու:

—Այս դէպքում, Րաֆֆին ասաց, պէտք է գնալ նրա մօտ և մխիթարել նրան մի քանի քաղաքավարական խօսքերով, որովհետև ես չիմանալով, որ այդ երգուածը այդչափ տխուր տպաւորութիւն պիտի գործէր նրա վրա, ես դրանով առիթ եղայ նրա վշտերի նորոգվելուն:

Մենք, դուրս գալով վրանից, գնացինք դէպի գետեզրը, ուր ցեղապետը նստած էր գետնի վրա՝ թիկն տուած մի մեծ քարաժայռի, որպէս մի սպարտացի հսկայ, երեսը դարձրած դէպի գետի ընթացքը, տխուր և մտայոյզ ծխում էր իր չիբուխը: Նրա թիկնապահները և որդիքը նրանից քիչ հեռու կանգնած էին արձանի պէս: Նրանք մեզ նշանացի արեցին, որ մօտենանք նրան: Մենք մօտեցանք: Երբ նա մեզ տեսաւ, հարցրեց:

—Ինչու հանդէսը թողիք եկաք ինձ մօտ:

Րաֆֆին նրան ուղղեց հետևեալ խօսքերը:

—Ես չիմացայ, իշխան, որ ձեր քաջ և աննման որդու վրա յօրինված այն հերոսական երգուածները այդպէս վշտալի ազդեցութիւն պէտք է առաջ բերէին ձեզ-վրա, ուստի և եկայ, որ ձեր ներողամտութիւնը խնդրեմ: Բայց նա աւելի քան արժանի է այդ գեղեցիկ գովասանքին:

—Չը խօսենք, ասաց Ալի աղան տխուր անցեալի մասին, տեսնում էք, հանդէպի լեռների ետևից ինչպիսի գեղեցկութեամբ է բարձրանում լրումն առած լուսինը, ճշմարիտ որ մի մազի չափ մեծ է, ինչպէս հրաշալի է, տեսնում էք:

Եւ ճիշտ որ գիշերային արեգակը, փարատելով խաւարը, մի լեռան գագաթի յետևից սկսել էր ցոյց տալ իր լուսաւոր սկաւառակը ամենայն փառահեղութեամբ, ցոլացնելով իր սպիտակագոյն լոյսի ճաճանչները Զօլախի արծաթափայլ ջրերի և փոքր առ փոքր ամբողջ ձորակի տարածութեան վրա: Մի սքանչելի տեսարան էր այդ:

Լուսնի արտափայլումից ձի, արջառ և ոչխար վաղ արթնանալով իրանց անուշ քնից խըրխնջում, բառաչում և մայում էին, որպէս թէ առաւօտ եղած լինէր: Այս ամենը այնքան գեղեցիկ էր, այնքան հրապուրիչ, որ արժէր առանձին նկարագրութեան: Հսկայ Ալի աղան, որ կէս թմրած և կէս արթուն էր, դառնալով դէպի Րաֆֆին, ասաց:

—Արդէն կէս գիշերը վաղուց անցել է, դուք հեռու տեղից էք գալիս, յոգնած կը լինէք, հարկաւոր է ձեզ հանգիստ, գնացէք ձեզ համար պատրաստած վրանը քնելու:

Մենք նրան բարի գիշեր մաղթելով, հեռացանք և նրա սպասաւորի առաջնորդութեամբ գնացինք այն վրանը, որի մէջ մեզ համար աբեղեան ճաշակով պարզ ու մաքուր անկողիններ էին պատրաստած: Մենք երկուսս հանգիստ քնեցինք, իսկ Րաֆֆին իր անկողնում նստած, ճրագի աղօտ լուսով մատիտը ձեռքին գրում էր ու գրում: Ի՞նչ էր գրում նա... ինչով էր հետաքրքրվում...

Վաղ առաւօտը, արևը հազիւ թէ լեռների գագաթներն էր լուսաւորել, որ մենք արթնացանք ձորի մէջ տեղի ունեցած աղմկալից իրարանցումից: Ալի աղայի որդիներից մէկը՝ գլուխը կորցրածի պէս յանկարծ մտաւ մեր վրանը և նստելով պատուիրեց, որ թէյ բերեն:

—Ի՞նչ կայ. ինչ է պատահել, ինչ-որ յուզված էք երևում, հարցրեց Րաֆֆին:

—Յուզված եմ, այո, պատասխանեց իշխանի որդին, հայրս վաղ առաւօտ 400 ձիաւորներով գնաց մեր թշնամի ցեղի հետ ընդհարվելու, որովհետև նրանք յանդգնելով մեր սահմանն անցել են և արդէն սկսել են մեր ցեղի վրանները կողոպտել: Հէնց այդ լուրը հայրս իմացաւ թէ չէ, իսկոյն դուրս գնաց իր հեծեալներով: Հայրս բարևներ ղրկեց ձեզ, ներողութիւն խնդրելով, որ չը կարողացաւ այսօր իր խոստումը կատարել, թողնելով նրան մի այլ յարմար ժամանակի:

Ինչպէս տեսնում էք, ձիարշաւի հանդէսը չէր էլ կարող այսօր տեղի ունենալ: Մի քառորդ ժամից յետոյ մենք ոտքի կանգնելով, պատրաստվեցինք հեռանալու: Րաֆֆին սրտագին շնորհակալութիւն յայտնեց երիտասարդ քիւրդ իշխանին, որ հաղորդէ իր հօրը նրա արած կամ արշաւանքների գնացքը խմբագրութիւնը սովորաբար յանձնում էր այնպիսի անհատների հրամանատարութեան, որոնք էկզեկուցիայի բարդ ու պատասխանատու գործողութիւնների մէջ պատշաճ հռչակ ունէին։ Մենք օրինակ, պահպանողական թերթի կովկասեան աւազակութիւններին նուիրած ընդհանուր յօդուածներում յաճախ ընդհարվում էինք կօզակների, ստանովօյների և ուրեադնիկների տրամաբանութիւնների հետ (որոնց համոզելը, ի դէպ ասած այնքան էլ հեշտ գործ չէ), և երբէք չէր պատահել, որ նոյն նիւթի վերաբերութեամբ Կովկաս ուղարկված սովորական արշաւանքների հրամանատարութիւնը յանձնված լինէր գիտութեան ներկայացուցիչներին։

Սակայն ներկայումս, ինչպէս նկատում ենք, Սուվօրինի համայնքի հայեացքը արմատականապէս փոխվել է։ Պէտք է ենթադրել, որ «Нов. Вр.» համոզվելով հանդերձ, որ ուրեադնիկների, կօզակների և այլ այս տեսակ բրէտտերների անհեթեթ թոթովանքներին պատշաճ դիմադրութիւն է հակադրում Կովկասի մամուլը, և, հետևապէս, լրագրի ծրագրած հումանիտարական սկզբունքները չեն իրագործվում, վճռել է յարձակողական տակտիկան լուրջ փոփոխութիւնների ենթարկել, և կովկասակերութեան պրօցէսը յանձնել հեղինակաւոր մասնագէտների ախորժակին, կատարելապէս համոզված լինելով, որ մասնագէտների հետ բանակուելու համար մի որոշ գիտնական պաշար է հարկաւոր, որից, ի հարկէ, մենք զուրկ ենք։ Երևի այս է պատճառը, որ «Нов. Время»-ի էջերում, ժամանակ առ ժամանակ Կովկասի զանազան անկիւններից զանազան մասնագէտներ ի ցոյց են դնում գրականական գոհարներ միամիտ ընթերցողի ճաշակը համեմելու և գրգռելու նպատակով։ Մի այս տեսակ մասնագէտ էլ, ի միջի այլոց, բնակութիւն է հաստատել Դաղստանի և Ղուբայի անտառներում «Нов. Время»-ի յատուկ յանձնարարութեամբ, և բնութեան ծոցից չանթեր է նետում խեղճ կովկասցիների հասցէին։ Մասնագէտի կամ աւելի ճիշտն ասած, բնագէտի—խեղկատակի—ազգանունը Չիչի է։ Ընթերցողին մասամբ յայտնի է, որ Нов. Время»-ի Կովկասին նուիրած յօդուածները ընդհանրապէս տարօրինակ բնաւորութիւն են կրում լօգիկայի տեսակէտից, սակայն պ. Չիչիի յօդուածը, այսպէս ասած, տարօրինակութեան չէդեօվրն է կազմում։

Պ. Չիչի «Нов. Время»-ում զետեղել է «Կովկասեան աւազակութիւնների պատճառը» վերնագրով մի յօդուած, որի մէջ կտրական կերպով վճռում է, որ Կովկասում տիրապետող աւազակութիւնների անմիջական պատճառներից մէկն այն հանգամանքն է, որ Ղուբայի և Դաղստանի պետական պաշտօնեաների չատատում հայեր և լեհացիներ կան։ Այս երկու ազգութիւնները, յայտնի է վաղուց, թէ ինչ վարկ են վայելում Սուվօրինի ау-то-да-фе-ում, և հետևապէս, շատ անբնական կը լինէր եթէ պահպանողական լրագրի աշխատակցից մենք պահանջէինք մի որ և իցէ նպաստաւոր կարծիք։ Սակայն հարցը սրանում չէ կայանում, և մեզ այդ չէ հետաքրքրում երբէք։ Մեզ համար կարևոր և հետաքրքրական է տեղեկանալ, թէ ինչ չարժառիթների վրա է հիմնած իր եզրակացութիւնները պ. Չիչի, որ դրականապէս մեղադրանքների հեղեղ է թափում երկու ազգութիւնների վրա։ Հետաքրքրվել է արդեօք պարոնը, թէ Ղուբայի և Դաղստանի վարչական մարմինների մէջ գտնվող հայերը և լեհացիները ինչ տոկոս են կազմում։—Ոչ։ Ապա ինչ։ Ոչինչ։ Այս մասին պ. բնագէտը խոհեմաբար լռում է, և ըստ երևոյթին մի բան ասելու կարիք էլ չը կայ. բաւական է, որ Դաղստանում հայեր և լեհացիներ կան, իսկ ուր այս երկու յանցաւոր տարրերի գէթ նշոյլն երևաց, այնտեղի անդորրութիւնը ընդմիշտ քայքայված պիտի համարել, և եղեռնագործութիւնների հիմնաքարը արդէն կառուցած։ Վերջին փաստը հերքելու փորձը մինչև անգամ անհեթեթութիւն կը լինի, մինչդեռ նոյնը պ. Չիչիին կրկնել են լեզգի խօջաները, հաջիները և չօբանները—մարդիկ, որոնց հեղինակաւորութիւնը «Нов. Вр.» ընդունում է իբրև աքսիոմա։

Լսեցէք թէ ինչ է ասում պ. Չիչի։

«Ես, իբրև բնագէտ, երկար ժամանակ ապրել եմ Դաղստանի և նրա հարևան Ղուբայի անտառներում։ Անընդհատ որս անելով ես յաճախ այցելել եմ մեր լեռնականների խրճիթները, ուր պատկառելի խօջաներից, հաջիներից և մասամբ աւազակներից տեղեկացել եմ, որ աւազակութիւնների զարգանալուն նպաստում են յատկապէս այն պարագաները, որ տեղական վարչութեան մէջ հայեր և լեհացիներ կան»։ Հրաշալի եզրակացութիւն և ոչ պակաս զարմանալի ընդունակութիւն։ Իրօք, Չիչիի արտաքոյ կարգի ընդունակութիւնները պիտի ունենալ, որպէս զի մի րօպէ չը հեռանալով նախնական անտառների ծոցից, ապրելով կաչաղակների և ագռաւների մէջ և ուսումնասիրելով հանդերձ Դաղստանի թռչնաբանական ֆաունան, միաժամանակ ուսումնասիրել և կովկասի մարդաբանութիւնը յանձին երկու երեք խօջաների ու չօբանների։ Ասենք թէ հանճարի համար խոչընդոտ չը կայ. Դիօգէն ապրելով տակառի մէջ այնուամենայնիւ մեծ ծառայութիւն մատուցեց մարդկութեան, քան թէ կլասիկական պատրիցիաները։ Պ. Չիչի նոյնպէս, ապրելով Դաղստանի և Ղուբայի լեռներում, գուցէ մեծ հաճոյք է պատճառել տեղական հաջիներին թռչնաբանական կամ որսորդական ֆանտազիաներով, բայց ինչ առել մայրաքաղաքի լրագրին, որ այս տեսակ ափեղցփեղ բաներ է տպում. ճշմարիտն ասած մեզ համար անհասկանալի է թէ ինչ նպատակի համար են դարերից ի վեր գլուխ ջարդել և ջարդում Կօնտեր, Միլլերներ, Սպենսերներ, Լիչենֆելդներ, Ֆուրիէներ և Միխայլօվսկիներ հասարակական գիտութիւնների վրա, մինչդեռ նոյն այդ գիտութիւնները աւելի համառօտ և տաղանդաւոր կերպով աւանդում է մեզանից երկու քայլի հեռաւորութեան վրա պ. Չիչի. վերցրէք ձեր հրացանը, գնացէք Դաղստանի և Ղուբայի անտառները, «մասլահաթ արէք» մի քանի հաջիների և չօբանների հետ, դիմեցէք «Новое Вр.»-ի բարեհաճ աշխատակցութեան, և հասարակական գիտութիւնները պատրաստ են։

Սուվօրինի մեթօդը ուրիշ կերպ պատուաստել չէ կարելի։

Տիրոսեան

Բաթում

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

—

Երկուշաբթի մարտի 17-ին, Թիֆլիսի արտիստական թատրոնում հանդէս եկաւ երգչուհի Բրօնսկայա Վիօլէտայի դերում «Տրավիատա» օպերայի մէջ։ Հասարակութիւնը ընդունեց երգչուհուն շատ սիրալիր կերպով՝ ծափահարութիւններով, ծաղկեայ փունջերով և թերթիկներով։ Բրօնսկայեան վերջին ձմեռը երգում էր Պետերբուրգի Կայսերական կօնսերվատօրիայի դահլիճում նշանաւոր արտիստների հետ, ինչպէս Արնօլդսօն, Տետրացինի, Մազինի, Արիմօնդի և այլն։ Պետերբուրգից յետոյ երգել է Կիևի օպերային բեմում, որի մամուլը մեծ համակրանքով է վերաբերվել դէպի շնորհալի երգչուհին։ Վերջերս շատ հազուագիւտ են ռուս երգչուհիների մէջ լաւ կօլօրատուրային ձայներ։ Բրօնսկայեան քնքոյշ, մշակված, գեղեցիկ ձայն ունի, որ կապված է պարզ արտասանութեան և արտայայտիչ առոգանութեան հետ։ Թիֆլիսը առաջին քաղաքն եղաւ, որ գնահատեց նրան, իբրև լուրջ և ապագայ ունեցող երգչուհու։ Եւ այդ գնահատութիւնը ճիշտ դուրս եկաւ։ Թիֆլիսումն են առաջին լուրջ աջողութիւնները ունեցել և այնպիսի սկսնակներ, որոնք յետոյ առաջ են գնացել և Կայսերական թատրոնի բեմերը անցել։ Օրինակներ շատ կան. Տարտակօվը, Դավիդօվը, Եակօվլեվը, Շալեապինը և շատ շատերը։ Վիօլետայի դերում սկզբից մինչև վերջը ձայնը մի և նոյն ուժով և գեղեցկութեամբ էր հնչում։ Ցանկալի է օրիորդին տեսնել «Սեվիլիայի սափրիչ» և «Լաքմէ» օպերաներում, որտեղ անշուշտ կը փայլի իր տաղանդով։ Բարքսենեան լաւ Ալֆրէդ կը լինէր, եթէ ձայնը կօկորդային չը լինի և յաճախ լսողների վրա վատ տպաւորութիւնը չը թողնէ. պէտք է ընտելանալ նրա ձայնի հետ, այն ժամանակ անշուշտ իբրև արտիստ լաւ տպաւորութիւն կարող է թողնել. Նրան փրկում է իր մտածած խաղը և երգելու հմտութիւնը։ Պ-ն Ձօնին Ժերմօնի դերում մեր կարծիքով այնքան էլ աջող չէր, իսկ խաղը թոյլ. աւելի շուտ նա իր շարժուածքներով յիշեցնում է մեզ Հուգենոտ օպերայի Նեվէրի դերում, քան թէ Ալֆրէդի ծանր Ժերմօնի դերում։ Թատրոնը համարեա լիքն էր։

Ա. Մամաջան

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԵՄԸ

(Նամակ Ալէքսանդրոպոլից)

—

Միակերպ և էստետիքական հմայքներից զուրկ անցնում է գաւառական կեանքը, ուստի և շնորհալի դերասանների այցելութիւնները հրճուանքով ընդունվում են հասարակութեան կողմից։ Տարաբաղդաբար անարժան դերասանական խմբակներ աւելի սառնութիւն, արհամարհանք, քան թէ սէր են առաջացնում դէպի բեմը։

Ամսիս 4-ին մեր պ. քաղաքագլուխն ու ես նստած խօսում էինք Արմենեանի խմբի գալստեան մասին, երբ նա ներս մտաւ և իր երևալուն պէս յիշեցրեց մեզ Ադամեանին ու նրա ներկայացումներն Ալէքսանդրոպոլում։ Կարծես նրա ոգին կերպարանափոխված ներկայանում էր մեր առջև։ Արմենեանը նոյն ոգևորութեամբ, նոյն շեշտով ու լեզւով խօսում էր իր փայփայած գործի մասին։ Նա ասաց, որ այս անգամ իբրև փորձ յաճախում է նաև Երևան ու Կարս, առ ժամանակ նիւթական շահ նկատի չունենալով։ Մենք սիրով ողջունելով համակրելի դերասանի և նրա ընկերակիցների գալուստը, պատրաստակամութիւն յայտնեցինք մեր քաղաքի բեմը աւելի հաստատուն հողի վրա դնելու և Արմենեանի խմբի և մեր քաղաքի մէջ աւելի սերտ կապեր պահելու համար։ Առաջարկեցինք կազմակերպել մի մնայուն թատրոնական շրջան, որի հետ Արմենեանը խորհրդակցելով ընտրէր պարբերական ներկայացումների պիէսները մեր տեղական կեանքի պահանջներին համապատասխան։ Այն ամենը, ինչ որ Թիֆլիսի ու Բագուայ բեմերի վրա են ներկայացնում, ի հարկէ, առանց այլևայլութեան Ախալքալաքի, Կարսի պէս քաղաքներում չեն կարող նպատակայարմար լինել։ Նոյն իսկ Երևանի ու Ալէքսանդրոպոլի պահանջները տարբեր են տիրող տարբեր բարքերի պատճառով։ Պ. Արմենեանը համակրեց այս առաջարկութիւնը և պ. քաղաքագլուխը հաղորդելով, որ դիտաւորութիւն ունի գարնան մեր ակմբանոցի բեմը վերաշինելու, խնդրեց պ. Արմենեանից, որ նա իրան աջակցէ կարևոր խորհուրդներով բեմական պահանջների նկատմամբ։

Մեր երկրորդ ցանկութիւնն էր աւելի մատչելի մուտքի վճարներ նշանակելը։ Մի կամ երկու անգամ կարելի է բարձր վճարներով էլ քիչ թէ շատ յաճախորդներ ունենալ, բայց մեր հասարակութեան մեծամասնութեան հա-

---

գեղեցիկ ընդունելութեան համար։ Երբ մենք բարեւ տալով վրանից դուրս եկանք, նկատեցինք, որ ձորակը համարեա թէ դատարկված էր։ Մի քանի տասնեակ ձիաւորներ էին միայն մնացել, ցեղապետի ընտանիքը և վրանները պահպանելու համար։ Լեռների կատարների վրա երևում էին մի քանի քրդեր նիզակները ձեռներին, ոտքով արագ վազում, սլանում էին այս ու այն կողմը որպէս ուրուականներ։ Նրանք շրջանկատ հսկողներ էին Ալի աղայի կողմից՝ թշնամու շարժումները նկատելու համար։ Վերջապէս մենք մեր ձիերը հեծնելով, նոյն օրվայ կէսօրին հասանք Փայաջուկ գիւղը։

Գլուխ VIII

Սալմաստ գաւառի հայաբնակ գիւղերից մէկն է Փայաջուկը, ուր մինչև օրս էլ բնակվում է Մէլիք Յակոբեանցների ընտանիքը, ինչպէս և մի քանի երևելի հայ վաճառականների ընտանիքներ իրանց առևտրական տներով։ Միւս հայաբնակ և հայաշատ գիւղերից նշանաւորներն են Ղալասարը, Հաֆթվանը, Սավրան, Մահլամը և Սառնան։ Սալմաստի տափարակ տարածութեան վրա գոյութիւն ունեցող բազմաթիւ գիւղերի գրեթէ մէջ տեղում է Դիլմանի փոքրիկ քաղաքը, որ զուտ պարսիկներով է բնակեցրած։ Այդտեղ է ամբողջ Սալմաստի բազարը, քարվանսարաները, առևտուրի կենտրոնը. դա մի տօնավաճառանոց է։ Այդտեղ են գալիս և ամեն կողմից հաւաքվում Սալմաստի բոլոր հայ և պարսիկ վաճառականները՝ շաբաթը մի կամ երկու որոշ օրեր, գնելու և վաճառելու համար։ Ամեն մի վաճառական Դիլմանի բազարում մի խանութ ունի, որ բացվում է միայն տօնավաճառի օրը։ Րաֆֆին էլ ունէր այնտեղ իր յատուկ խանութը, ուր նա զբաղվում էր իր սեփական առևտուրով, որը այդ միջոցին հասել էր իր բարձրութեան մաքսիմումին։ Առևտուրի հետ զուգընթաց Րաֆֆին իր հօր պէս առաջ էր տանում իրանց գիւղի դաշտային և ագարակային գործերը, որոնց սակայն առևտուրից աւելի էր սիրում։

Ես այստեղ պէտք է ասեմ, որ թէև շատ անգամ շեղվում եմ կենսագրական պայմաններից, սակայն մի առանձին էլ պահանջ կայ բազմակողմանի կերպով ուսումնասիրելու կենսագրեալի ամբողջ կեանքի երևոյթները։ Օրինակ. ինչպիսի ընտանիքում է սնվել նա, ինչպիսի մանկութիւն և երիտասարդութիւն ունեցել, ինչ գործերով է պարապել, ուր է գնացել և ինչպիսի մարդկանց հետ յարաբերութեան մէջ է եղել, թէ որպիսի դպրոցներում է աւարտել և ինչ գաղափարի տէր էր և այլն։

Մտնենք մի րօպէ Րաֆֆիի վերոյիշեալ խանութը։ Մի կողմում դարսած են հազարաւոր շիլանների ծրարները, որոնք նա հետզհետէ գնում է ու վճարում։ Խանութից մշակները շիլանների ծրարները պատռելով հակեր են պատրաստում։ Խանութում նստած են մի քանի պարսիկ համեստ վաճառականներ, որոնց հետ նա փոխանակագրերի, չէքերի և այլ հաշիւներ է տեսնում։ Երբ հաշիւ գրքում արձանագրում է դրամական ելևմուտքը, այնուհետև սկսում է նրանց բացատրել, թէ հէնց սկզբից պարսիկները և հայերը իբրև դրացիներ գրեթէ միշտ լաւ յարաբերութեան մէջ են եղել։

Րաֆֆին նրանց բացատրում է, որ պարսիկները և հայերը իրար համակիր ժողովուրդներ են, բացառութիւնները աննշան են։ Նա խօսում է Կիւրոսի, Ջէմշիդի և Քեյքաւուսի մեծամեծ գործերից, Անուշիրավանի բարոյական խրատներից։ Արշակունեաց ժամանակ, ասում էր նա, Արշակ մեծ թագաւորը Պարսկաստանումն էր թագաւորում, իսկ նրա եղբայր Վաղարշակը Հայաստանում, որ այդ ժամանակ պարսկական մի նահանգ էր համարվում և այլն և այլն։ Վերջապէս ուզում եմ ասել, որ Րաֆֆին այն տեսակ և այն տիպի մարդկանցից էր, որոնք երբէք յարմար և դիպող րոպէն բաց չեն թողնի. Նա կաշխատէր մի բանով օգնել և օգտվել։ Նա ժամավաճառ լինել երբէք չէր սիրում։

Անուանի հնագէտ և դրամագէտ (Numismate) հայր Կղեմէս վարդապետ Սիբիլեանը, որ Վիեննայի Մխիթարեաններից էր, 60-ական թւականներից էլ առաջ՝ բնակութիւն էր հաստատել Սավրա գիւղում և շրջելով Պարսկաստանի զանազան կողմերը իբրև հնախոյզ՝ բաւականաչափ հին ձեռագրիներ, հին դրամներ, հին քանդակներ և նկարներ էր հաւաքում։ Նա գիտէր արդէն, որ Րաֆֆին էլ ունէր մի գեղեցիկ հաւաքածու զանազան հին և հետաքրքրական իրեղէններից և շատ անգամ գնում էր նրանց դիտելու։ Այդ երկուսի մէջ բարեկամական յարաբերութիւնը առաջ գնալով նրանք միասին հրատապ վիճաբանութիւն էլ էին անում կաթոլիկ և հայկական եկեղեցիների տարբերութեան վրա։

Մի օր հանգուցեալ Կղեմէս վարդապետի հետ գնացինք Փայաջուկ՝ Րաֆֆիին այցելութեան։ Երբ մենք ներս մտանք նրա գրասենեակը, առաւօտ էր, բայց նա զբաղված էր գրելով։ Երբ նա մեզ տեսաւ՝ ժպիտը երեսին սկսեց այսպէս խօսել։

—Աստուած օգնական, դուք լաւ էք արել, հայր սուրբ, որ բարեկամիս հետ եկել էք ինձ մօտ, ճշմարիտ, ես ձանձրացել էի մեր գիւղական և առևտրական գործերը վարելուց։ Մի մարդ, որ փոքր ի շատ է ապրել է քաղաքներում, նրա համար գիւղական կեանքը անտանելի է, դուք ինձ մի գեղեցիկ շնորհ էք արել և ամբողջ օրը իմ հիւրերս էք։

—Լաւ, ասաց վարդապետը, բեր տեսնենք նոր ինչ էք գրել, ինչ նոր լրագիրներ էք ստացել և ինչ նոր բաներ էք աւելացրել ձեր հնագիտական հաւաքածուի վրա, որ ինձ աւելի են հետաքրքրում։

Րաֆֆին ոտքի կանգնելով, որտեղից որ էր, բերեց դրեց սեղանի վրա մարդկային մի հին, շատ խոշոր գանգ, նոր հանված հողի տակից, որի երկու ականջատեղերի միջանցքով, անցրել էին մի հաստ երկաթէ ձող՝ իսպառ ժանգոտած։

—Մի քանի օր առաջ, ես փորել էի տալիս մեր տօրոնի արտը, ասաց Րաֆֆին, մէկ էլ տեսայ, որ մշակները մի բան նկատելով՝ վրա ընկան և դուրս բերեցին այդ գանգը, ես տեսնելով, որ իր խոշորութեամբ զուրկ չէ հնութիւնից, պահեցի։

—Խոհեմ էք վարվել, պատասխանեց վարդապետը, այդ գանգը կրկնակի նշանակութիւն ունի. մէկ՝ որ դա այժմեան գանգերից տարբերվում է իր խոշորութեամբ և մէկ էլ, այդ երկաթը ցոյց է տալիս, որ այդ մարդը յանցաւոր է եղել, յայտնի չէ թէ երբ, դրան պատժել են երկաթէ տաքացրած շամփուրով։ Ինչպէս տեսնում էք անցրել են նրա ականջներից։

Դրանից յետոյ Րաֆֆին մեզ ցոյց տուեց իր հնագիտական ամբողջ հաւաքածուն, որի մէջ կային հազուագիւտ հին դրամներ, նուրբ քանդակներ, նկարներ, հին ձեռագիրներ և այլն, որոնք բաւական արժէքաւոր էին։

(Կը շարունակվի)

մար ծանր է մի քանի անգամ 6—10-ական րուբլի տալ, երբ ընտանիքով թատրոն գալու պէտք է լինում։ Աւելի նուազ գներով տոմսերը կը տարածվէին հասարակութեան բոլոր խաւերի մէջ, որով ներկայացումները համատարած և բազմամարդ կը դառնան։

Գ. Արմենեանը իբրև փոքր ամսի 4-ին ներկայացրեց Զուդերմանի «Ֆրիցխէն» դրաման—1 արարուածով. Ալֆ. դը-Միւսէի «Վաղաժամ վճիռը»—կոմեդիա 3 գործողութեամբ և ամսիս 9-ին Էմ. Օժիէի ու Ժ. Սանդոի «Պարոն Պուարիէի փեսան», կոմեդիա 4 արարուածով։

Ցաւօք սրտի առաջին ներկայացումը հասոյթի կողմից ապարդիւն եղաւ, որովհետև օրը անյարմար էր ու հասարակութիւնը անպատրաստ։ Թէև աթոռների դատարկ շարքերը աւելի սառնութիւն՝ քան թէ ոգևորութիւն կարող էին ներշնչել դերասանական խմբին, վերջինս մինչև վերջ ներդաշնակութեամբ գլուխ հանեց գործը։ Ռշտունին (ֆօն Գրոսսէ պաշտօնաթող մայօր), տ. Սաթենիկ Ջմշկեան (Հեգինէ, նրա կինը), Արմենեան (Ֆրից, նրանց որդի լէյտէնանտը), տ. Դանդուրեան-Արմենեան (Ֆօն-Հալէ դֆօրդ) գրաւեցին հասարակութիւնը՝ իբրև թարմ և յուսատու ոյժեր։ Մենք թարմ ոյժի տպաւորութիւն ստացանք նաև տ. Սաթենիկից, որ երիտասարդական եռանդով, կատարելագործվելու բուռն ձգտումով մասնակցում էր Արմենեանի խմբին։

Բոլոր երեք պիեսների ընտրութիւնն էլ մենք աջողված չենք համարում մեր բեմի համար։ «Ֆրիցխէն» մի արարուածով դրաման բէլիէֆ կերպով ներկայացնում է անբարոյական ծնողների ազդեցութիւնը զաւակների վրա և մանաւանդ չկշտով ողբում է սուրբ զգացմունքների մահը մի երիտասարդի մէջ, որ այլ ևս անկարող է սիրել չքնաղ Ագնէսին, որի հետ առաջ կապված եղել է քնքոյշ զգացմունքներով։ «Վաղաժամ վճիռը» հանդէս է հանում միամիտ, նազելի կոյսի սիրոյ յաղթանակը։ Շուայտ Վալենտինը (Արմենեան) փոխանակ իր բարեմիտ հօրեղբօր խորհուրդը լսելու և իբրև ազնիւ մարդ՝ օր. Սեսիլի (տ. Դանդուրեան-Արմենեան) ձեռքը խնդրելու, ամբարտաւանութեամբ խօսելով կանանց մասին, առաջարկում է հօրեղբօրը մի քանի օր ժամանակ տալ, ապացուցանելու համար, որ այս Սեսիլի հետ էլ կարելի է ամեն տեսակ խաղեր խաղալ։ Բայց միամիտ, վստահ սէրը ընկճում է երիտասարդի զազրելի ձգտումը և նրան տոգորում ազնիւ զգացմունքով։ «Պարոն Պուարիէի փեսան» էլ մեզ ներկայացրեց պարիզեան ազնուական ու առևտրական դասերի ներկայացուցիչների ընդհարումը, մէկի բարձրամտութիւնը, միւսի նուաստութիւնը, բայց մեզ, գաւառացիների համար աւելի հետաքրքրական էր այս անգամ էլ վեհանձնութեան յաղթանակը։ Երբ Անթուանէտը, խաբված կինը, ամուսնութեան հետևեալ օրը տեսնում է, որ Մարկիզ դը-Պրէլը միայն իր հօր միլիօնների համար է ամուսնացել և որ նա դատապարտելի յարաբերութիւններ ունի մի այլ կնոջ հետ, արհամարհանքով երես է դարձնում մի օր առաջ սիրած մարդուց, ապահարզան պահանջելով. բայց և իր երջանկութիւնն ապահովողների նկատմամբ այնքան վեհանձն է գտնվում, որ վճռական վայրկեանին պատառոտում է նրան պարտաւորող նամակը ու դարձի բերում անկեալ մարդուն։ Արմենեան ամուսինների ոյժերն այստեղ աւելի ազատութիւն գտան և ցանկալի բուռն հաւանութեան արժանացան։ Մի քանի անգամ էլ «բոլորը, բոլորը, Արմենեան, Միրզոյեան» որոտացին։ Գեղեցիկ տպաւորութեան տակ հեռացող մարդիկ ասում էին.—այ, արժէ այսպիսի ներկայացումներին գալ»։

Ե. Տ. Միրաքեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի, մարտի 17-ին, երեկոյեան, Թիֆլիս ժամանեց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը։

Այսօր, մարտի 19-ին, տեղի կունենայ Թիֆլիսի Ալէքսանդրեան այգու մէջին մասում կանգնեցրած Գօգօլի արձանի հանդիսաւոր բացումը։ Արձանի բացմանը կը մասնակցեն և Թիֆլիսի ուսումնարանների աշակերտները։

Երկուշաբթի, մարտի 17-ին, Թիֆլիս հասաւ ներքին գործերի մինիստրութեան խորհրդի անդամ իշխան Գօլիցին և այցելեց Թիֆլիսի գիմնազիաները։

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը ներկայումս հարց է բարձրացրել էժանացնելու երկաթուղու գները այն անձանց համար, որոնք ուղևորվում են բժշկվելու Կովկասեան հանքային ջրերը։

Մեզ խնդրում են յայտնել, որ Ա. Աբէլեանցի «Մարվող ճրագներ» նոր դրաման Ազնուականների թատրոնում խաղալու են ոչ թէ չորեքշաբթի մարտի 19-ին, այլ շաբաթ օր, մարտի 22-ին։

Մեզ հաղորդում են, որ Գօրուց մինչև Ցխինվալ երկաթուղի շինելու հարցը պէտք է քննվի Թիֆլիսի նահանգի ազնուականութեան ընդհանուր ժողովում և երբ նա հաւանութիւն գտնի, այն ժամանակ կընտրվի մի նոր գործադիր մարմին, որ պէտք է մշակէ ձեռնարկութեան ֆինանսական մասը։

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ գարնանը Բօրչալուի գաւառում կը բացվեն դարձեալ երկու նոր կաթնատնտեսական գործարաններ։ Վերջին տարիները նկատվում է առաջադիմութիւն գիւղատնտեսական այդ ճիւղի մէջ և իւրաքանչիւր տարի աւելանում են մի քանի գործարաններ։

Թիֆլիսի ազնուականների հողային բանկի վարչութիւնը, ինչպէս հաղորդում են տեղական լրագիրները, որոշել է իրան պատկանող թատրօնը քանդել և նրա տեղ շինել խանութներ։

Համաշխատակցութեան գաղափարը աւելի ու աւելի լայն գործադրութիւն է ստանում նաև Ռուսաստանում։ Այդ օգտակար շարժումը արդէն իր սեփական օրգանն էլ ունի «Потребительное общество»—(Սպառող ընկերութիւն) վերնագրով, որ լոյս է տեսնում Մոսկվայում—(Палиха, д. 8)—շաբաթը մի անգամ։ Պէտք է յուսալ, որ այդ նոր թերթը կունենայ ցանկալի աջողութիւն, տարածվելով ընթերցողների լայն շրջանում։ Բաժանորդագինը թանգ չէ. միայն 4 րուբլի։

Մարտի 17-ին Թիֆլիսում վախճանվեց իշխան Ն. Դ. Ջավչավաձէ։ Հանգուցեալը յայտնի էր որպէս Թիֆլիսի նահանգի փոխ-նահանգապետ՝ Կ. Օրլովսկու նահանգապետութեան ժամանակ և ապա որպէս նախագահ Թիֆլիսի նահանգական դատարանի։

Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը առաջարկել է Թիֆլիսի նահանգի պետական կալուածների վարչութեան ուշադրութիւն դարձնել լիտօգրաֆիական քարի հանքերի շահագործութեան վրա, որոնք գտնված են նահանգի պետական հողերում։

ԱՐԴԱՆՈՒՋԻՑ մեզ գրում են. «Այս տարի սիրողները ծխական ուսումնարանի դահլիճում երկու ներկայացում տուին։ Երկու ներկայացումներն էլ սպասածից աւելի աջող անցան։ Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր հանդիսականներով, նոյն իսկ շատերը ցանկացողներից տոմսակ չը լինելու պատճառով ստիպված էին վերադառնալ տուն։ Բացի արդանուճցիներից ներկայացումներին ներկայ էին և մեր հարևան Տանձոտ գիւղի երիտասարդները, որոնք մասնաւորապէս թատրօնի համար էին Արտանու եկել, չը նայած ցրտերին։ Տանձոտցի երիտասարդների խնդիրքով տեղիս սիրողները զատկական տօներին պատրաստվում են գնալու Տանձոտ ներկայացում տալու. ուրեմն երկու հարևան հայ լուսաւորչական և հայ-կաթօլիկների մէջ հաստատվում է ընդհանուր ոյժերով առաջադիմելու կապը։ Ի դէպ. տանձոտցիներն ունեն ընթերցասիրական ընկերութիւն. շաբաթը երեք անգամ գիշերները հաւաքվում են և կարդում են ժողովրդին մատչելի վէպեր և բժշկական գրքեր։ Որքան ուրախալի է տեսնել, երբ ծերունի տանձոտցին թողնելով սրճանոցի ապականված օդը, քայլերը ուղղում է դէպի տէր-հօր տունը նոր բան լսելու։ Ընթերցանութեան գալիս են այժմ այնպիսիները, որոնք մի ժամանակ կռիւ էին անում երիտասարդների հետ, թէ ինչու համար հարսանիքից գոյացած երիտասարդների «ջէֆի» փողը գրքերի են տալիս։ Տարեկան ստանում են մօտ 30—30 րուբլու նոր գրքեր։ Իսկ Արդուինից գալիս են «Մշակի» և «Մուրճի» համարները, որոնք մնում են ընթերցասիրական ընկերութեան»։

ՆՕՂԱՑՍԿԻՑ մեզ գրում են. «Մարտի 2-ին, տեղիս հայոց ս. Աստուածածին եկեղեցու երէցփոխ պ. Մ. Զորչոփեանցի հրաւէրով եկեղեցական շինութեան մէջ կայացաւ ծխականների ժողով՝ քննելու երէցփոխի ներկայացրած նոյն եկեղեցու 1902 թւի հաշիւը։ Չը նայելով որ ժողովին ներկայ էր ծխականների շատ փոքր թիւ, այնուամենայնիւ ժողովը կայացաւ և ներկայ եղող ծխականները, լսելով երէցփոխի կարդացած հաշիւը, գտան այն կանոնաւոր և ընդունեցին։ Հաշւից երևում է, որ եկեղեցին 1902 թւի ընթացքում ունեցել է մուտք՝ 271 ր. 8 կ. և ելք՝ 254 ր. 34 կ., և այդ թւերը պարզ ցոյց են տալիս, թէ որքան աղքատ է մեր եկեղեցին և որքան չնչին, աննշան են նրա եկամուտները և գուցէ մենք սխալված չենք լինի, եթէ ասենք, որ հազիւ թէ մեր թեմում գտնվի հայոց, այսպիսի չնչին եկամուտ ունեցող, մի այլ եկեղեցի»։

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Կիրակի, մարտի 9-ին, տեղիս ցիրկ-թատրօնում հայ դերասանական ընկերութիւնը տուեց իր երկրորդ ներկայացումը. խաղացին Գ. Բրանդէսի յայտնի «Հիւր» դրաման և «Ադամ ու Եւա» վօդըվիլը՝ պ. Մելիքի թարգմանութեամբ։ Անկարող լինելով այստեղ երկար խօսել հռչակաւոր Բրանդէսի «Հիւրի» բովանդակութեան մասին, որը լի է հոգեբանական հանգոյցներով, մենք ուղղակի կանցնենք խաղացողներին։ Պ. Զարիֆեան կատարում էր հարուստ կալուածատիրոջ՝ Ներգօրի դերը, որը ամենապատասխանատու դերն է այդ դրամայում։ Պարոնը այնքան զգացված էր խաղում երկրորդ և վերջին, դրամատիկական լիրիզմով լի գործողութիւնը, մանաւանդ վերջին տեսիլը, ուր իսկապէս ազդու կերպով կարողացաւ արտայայտել Ներգօրի ներքին ամբողջ վիշտն ու տանջանքը, որ նրա խաղը հանդիսականների վրա ուժեղ տպաւորութիւն գործեց։ Պ. Զարիֆեան, եթէ չը թուլացնէ իր աշխատասիրութիւնն ու եռանդը՝ ապագայում լաւ ոյժ կը լինի մեր աղքատիկ բեմի համար։ «Հիւր» Ռեգգօլդի դերը պ. Ստեփանեանը լաւ տարաւ. ըստ երևոյթին պարոնը ֆաթ դերերում ևս աջողութիւն ունի։ «Ադամ ու Եւա» վօդըվիլում գիւղացի Ժակի դերը կատարեց պ. Մելիք, որ մինչև վերջը ծիծաղացրեց հասարակութիւնը։ Ժողովուրդը գոհ էր ներկայացումից և անընդհատ ծափահարութիւններով բեմ էր կանչում բեմի եռանդոտ մշակներին։ Այս կիրակի խաղում են «Թագի համար»—Կօպպէի ողբերգութիւնը և այնուհետև գնալու են Մերվ՝ մի քանի ներկայացումներ տալու համար»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փետրվարի 8-ին սենատը սկսեց քննել դաւանութիւնների բիւջէտի քննութիւնը։ Այդ առիթով սենատօր Դելպէշ դիմեց կառավարութեանը հարցապնդումով նրա եկեղեցական քաղաքականութեան և մանաւորապէս վատիկանի հետ նրա ընդհարման առիթով նոր եպիսկոպոսներ նշանակելու մասին։ Նա ապացուցանում էր կօնկօրդատը քանդելու անհրաժեշտութիւնը, որը անհամապատասխան է աշխարհական պետութեան շահերին։ Պատասխանելով Դելպէշին, մինիստր-նախագահ Կօմբ յայտնեց հետևեալը. «Կօնկօրդատը, որով կանոնաւորվում են յարաբերութիւնները եկեղեցու և պետութեան մէջ Ֆրանսիայում, դնում է պարտաւորութիւններ երկու կողմերի վրա։ Պետութիւնը կատարում է իր յանձն առած պարտաւորութիւնները և կը կատարէ նրանց, մինչև կօնկօրդատը չը քանդվի։ Բայց նրա վերացումը տեղի կունենայ միայն այն ժամանակ, երբ մտքերը կը նախապատրաստվեն դրա համար և երբ նրանք կը համոզվեն, որ ոչ թէ պետութիւնը, այլ ինքն եկեղեցին անխուսափելի դարձրեց այդ միջոցը։ Կառավարութիւնը կարծում է, որ այդ րօպէն դեռ չէ հասել, բայց եթէ գործերը սրանից յետոյ էլ այդպէս կընթանան, ինչպէս նրանք ընթանում էին վերջերս, այն ժամանակ կօնկօրդատի ջնջման կողմնակիցները երկար սպասելու հոգս չեն ունենայ։ (Բուռն ծափահարութիւններ ձախակողմում), որովհետև կաթօլիկ հոգևորականութիւնը իւրաքանչիւր րօպէ հասկացնել է տալիս, որ նա դիտաւորութիւն չունի կօնկօրդատին հետևել։ Նա խախտում է կօնկօրդատը, երբ խառնվում է աշխարհական գործերում և քաղաքականութեան մէջ, երբ կամենում է իր կամքը պետութեան վզին փաթաթել հոգևոր պաշտօններ տալու ժամանակ, երբ եպիսկոպոսները հեռացնում են իրանց պաշտօններից ոչ-կուսակրօն հոգևորականութեան ներկայացուցիչներին և փոխարինում են նրանց չը թոյլատրված միաբանութիւններին պատկանող կուսակրօններով, երբ նոյն եպիսկոպոսները աշկարայ պախարակում են պետական օրէնքները։ Եկեղեցին աշխատում է վայելել կօնկօրդատի օգուտները, յանձն չառնելով իր վրա նրանից բղխող պարտաւորութիւնները։ Եկեղեցին համարում է կօնկօրդատը ոչ թէ երկկողմեան դաշնագիր, այլ միայն մի զիջում, որ արել է հոգևոր իշխանութիւնը։ Եթէ հոգևորականութեան կարծիքը այդպէս է, թող, ուրեմն աշկարայ յայտարարէ այդ և մենք կը գործենք։ Ապա բացատրելով գոյութիւն ունեցող տարաձայնութիւնները Վատիկանի հետ եպիսկոպոսներ նշանակելու հարցի վերաբերութեամբ, Կօմբ յայտնեց, որ ինքն զիջումներ չի անի այդ հարցում։ Դրանից յետոյ սենատօրները 188 ձայնով 49-ի դէմ հետևեալ վճիռն ընդունեցին. «Սենատը հաւանութիւն է տալիս կառավարութեան յայտարարութեանը և յոյս է դնում նրա հաստատակամութեան վրա պետութեան իրաւունքները պաշտպանելու գործում»։ Դրանից յետոյ որոշվեց 166 ձայնով 71-ի դէմ Կօմբի այդ ճառը կպցնել պատերին ամբողջ Ֆրանսիայում։

—«Standard» լրագրի ասելով, ծովային բիւջէտը քննելու ժամանակ, անգլիական ծովային մինիստր Ֆօրնտէր յայտնեց, թէ կատարելապէս հասկանում է այն հետզհետէ աճող ծանրութիւնը, որ եւրօպական ազգերն ստիպված են կրել ծովային և ցամաքային զօրքերի պահպանութեան համար պահանջվող ծախքերի պատճառով, թէ կառավարութիւնը պատրաստվում է համաձայնութիւն կապել պետութիւնների հետ ընդհանուր զինաթափութեան վերաբերմամբ, բայց չէ կարող ինքը նախաձեռնութիւն յանձն առնել այդ գործում և անել առաջին քայլը։

—Կ. Պօլսից հեռագրում են «Вечерняя Почта» լրագրին. «Մեծ յուզմունք առաջ բերեց այնտեղ այն գաղտնի, տնային բանտարկութիւնը, որին ենթարկված է նախկին մեծ վեզիր Սայիդ-փաշան։ Բայրամի օրը, երբ նա կամենում էր դուրս գնալ տանից՝ մասնակցելու ձեռքի համբուրման հանդէսին, նրա տանը շրջապատող գաղտնի գործակալները թոյլ չը տուին փաշային հեռանալու տանից։ Սայիդը գանգատվեց սուլթանին այս դէպքի առիթով, բայց փոխանակ գոհացում ստանալու իր գանգատին, հսկողութիւնը նրա տան վրա աւելի սաստկացաւ։

—Նէապօլից գրում են «Socolo» լրագրին, որ այնտեղ եռանդուն պատրաստութիւններ են տեսնում հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տալու գերմանական Վիլհէլմ կայսրին, որ մօտ ժամանակներումս պէտք է այցելէ Իտալիա։ Կազմված է մի կօմիտէտ՝ մի շարք հանդէսներ կազմակերպելու համար, որոնց մէջ աչքի ընկնող տեղ կը բռնէ միջնադարեան ասպետական մրցութիւնը այն ձևով, որ կատարվել է 1532 թւին Կարլոս V-ի ժամանակ, երբ նա յաղթանակով վերադառնում էր Սպանիայից։ Ասպետական մրցութեանը կը մասնակցեն XVI-րորդ դարի ազնուականների սերունդները։ Կօմիտէտի հրաւէրով Նէապօլ են հաւաքվել Իտալիայից, Սպանիայից և Ֆրանսիայից ասպետների 440 հոգի ազնուականներ, որոնք և կը կազմեն երեք առանձին մրցութեան հանդէսներ—իտալական, սպանիական և ֆրանսիական։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 մարտի

ՌԻԳԱ։ Պաշտօնապէս բացվեց նաւագնացութիւնը։

ԵՐՈՒՍԱՂԷՄ։ Գիշերը ստորերկրեայ յանկարծակի ուժեղ հարված զգացվեց, որ և սարսափ ազդեց հասարակութեան վրա։ Վնասն աննշան է։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Խօյտալէս գաւառում բռնկվեց յեղափոխութիւն։ Ապստամբները մտան Գրանադա գաւառը։ Գործերի դրութիւնը լուրջ է, որովհետև յեղափոխականները օգնութիւն են ստանում դրսից։ Կառավարութիւնը զինուորական մեծ ոյժեր է հաւաքում և վճռել է ստիպողական փոխառութիւն անել։

ԲԵՐԼԻՆ։ Կայսեր հրամանի համեմատ րայխստագի պատգամաւորների ընտրութիւնը կը կայանայ յուլիսի 3-ին։ Կայսրուհու առողջութիւնը հիանալի է։

ՊԱՐԻԶ։ Սենատի այսօրվայ նիստում քննվում էր ֆինանսական օրէնքի 31-րորդ յօդվածը, որի համեմատ պէտք է զտող գործարանները մտնող իւրաքանչիւր 100 կիլօգրամ հանքային իւղերից $1^{1}/_{4}$ ֆրանկ հարկ վերցնել։ Յօդվածը ընդունվեց 176 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 76-ի։

18 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правительственный Вѣстник»-ում տպագրված է Բիտօլիի ռուսաց հիւպատոսի զեկուցումից հետևեալ քաղվածքները. —Հիւպատոսութիւնը պաշտօնապէս հաղորդեց տեղական քրիստոնեաներին, որ Կայսերական կառավարութիւնը խստիւ դատապարտում է կօմիտէտների գործունէութեան ձևը. նոյնպիսի յայտարարութիւն արված է և կօմիտէտների անդամներին, որոնց առաջարկվեց դադարեցնել դատապարտելի գործունէութիւնը և չը խանգարել պետութիւնների առաջարկած բարենորոգումները իրականացնելուն։ Շարժման ղեկավարները մեծ դժգոհութեամբ ընդունեցին այդ յայտարարութիւնը, որովհետև նրանք բաւարար չեն համարում բարենորոգումները և ցանկանում են ինքնավարութիւն մտցնել երեք վիլայէթներում։ Մօտ օրերս կոմիտէտները մի լիազօր ուղարկեցին հիւպատոսարանին յայտնելու, թէ դրանք անհնարին են համարում արձակել հրոսակախմբերը մինչև որ բարենորոգումները իրականանան և նպատակայարմար դառնան։ Կոմիտետների ղեկավարները աշխատում են չը տարածել սուլթանի շնորհած ներման լուրը և տեղեկութիւններ Բ. Դրան ընդունած այն միջոցների մասին, որոնց նպատակն է քրիստոնեաների վիճակը բարւոքել։ Հրոսակախմբերի գործունէութիւնը չէ դադարել. նրանց և թիւրքական զօրքերի մէջ յաճախ տեղի են ունենում արիւնահեղ ընդհարումներ։ Շատ անգամ զօրքերին օգնում են բաշիբոզուկները, սակայն թիւրքերը խաղաղ բնակիչների վրա բռնութիւն չեն գործ դնում։ Վերջին ժամանակներս շատ յաճախ քաղաքական սպանութիւններ են կատարվում, որոնց գլխաւոր զոհերն են սերբ ուսուցիչներն ու քահանաները, որոնք համոզում են համագիւղացիներին չը միանալ հրոսակախմբերի հետ։ Վերջին ժամանակներս կոմիտէտների գործունէութիւնը զգալի չափով ուժեղացել է։ Այդ փաստը նըկատվեց հէնց այն ժամանակ, երբ Բիտոլի եկաւ բօլգարական վաճառականական գործակալութեան կառավարիչը. նրա գալուստը տարածեց Բօլգարիայի համար աննպաստ այն լուրը, թէ իշխանութիւնը մասնակից է կոմիտէտների գործունէութեանը։

Թիւրք կառավարութիւնը շարունակում է եռանդուն կերպով իրականացնել պետութիւնների առաջարկած բարենորոգումները։ Ներման հետ միասին Սալօնիկի Վիլայէթի ֆինանսների տեսչին հրամայված է կազմել մօտեցողական երեք վիլայէթների բիւջէտի նախագիծը։ Երկիրը խաղաղացնելու համար մեծ օգնութիւն է ցոյց տալիս Բիտոլի գեներալ-նահանգապետ Ալի Ռիզա փաշան։

Ուսկիւբի ռուսաց հիւպատոսի հեռագիրը մարտի 14-ին. «Կոսսովի Վիլայէթում սաստկանում է խառնակութիւնը. Կօնչանում և Իշտիբում կան շատ խմբեր, որոնց անդամների թիւը հասնում է 100-ի և աւելի՝ ուսուցիչներից և քաղաքացիներից բաղկացած։ Մտադրութիւն կայ օդը ցնդեցնել Իշտիբի զօրանոցները և ընդհատել երկաթուղային ու հեռագրական հաղորդակցութիւնը։ Բօլգարիայից սպասվում են շատ սպաներ։ Մահվան սպառնալիքով ստիպում են գիւղացիներին՝ օգնել հրոսակախմբերին, զէնք և փող տալ, պաշարեղէն պատրաստել և զէնք ընդունել։ Կոմիտետները խնամքով ծածկում են ժողովրդից հիւպատոսարանի այն յայտարարութիւնը, թէ Կայսերական կառավարութիւնը հաւանութիւն չէ տալիս կոմիտետների գործունէութեանը։ Նրանք մինչև անգամ աշխատում են համոզել տեղացիներին, թէ ամեն ինչ կատարվում է Ռուսաստանի հովանաւորութեան տակ։ Մարտի 11-ին Սոկոլարցի գիւղից մի պատգամաւորութիւն եկաւ հիւպատոսարան և խնդրեց յայտնել, թէ արդեօք ճիշտ է, որ շարժումը Ռուսաստանի հրամանով է սկսվել։ Այդ պատգամաւորութիւնը ասաց, որ ժողովուրդը թէև չէ համակրում կոմիտէտների գործունէութիւնը, բայց պատրաստ է գնալ, ուր որ կը հրամայէ Ռուսաստանը. խնդրում են միայն կանանց ու երեխաներին ապաստարան տալ։ Այդ փաստը ակներև ապացոյց է որ ներկայ շարժումը արհեստական է. դրութեանը սուր կերպարանք տալու համար կոմիտետները թիւրքերին սարսափելի բռնութիւնների են ենթարկում։

Կոմիտէտները ամեն կերպ աշխատում են զարթեցնել թիւրքերի ընդհանուր թշնամութիւնը և դրդել նրանց կոտորելու ամբողջ քրիստոնեայ ազգաբնակութիւնը»։

ՎԻԵՆՆԱ։ Կառավարչական շրջաններում քըննվում է Տեանձինում աւստրօ-ունգարական բանկ հիմնելու հարցը՝ Աւստրիայից դէպի Չինաստան արտահանումը ուժեղացնելու համար։

ԽԷԽԻՆԳԷՆ։ (Հօհէնցօլլերնի գաւառ) անցեալ գիշերը ստորերկրեայ ուժեղ հարված զգացվեց։ Նագօլդ գետի (Շվարցվալդ) հովտում էլ երկրաշարժ տեղի ունեցաւ։

ԼՈՆԴՈՆ։ Թագուհին ուղևորվեց Կոպէնհագէն։

ԲԵՐԼԻՆ։ Կայսրը այցելեց դեսպան կոմս Օստէն Սակէնին։

ԼՈՆԴՈՆ։ Թագաւորը ուղևորվեց Պօրտսմութ, իսկ այնտեղից գնալու է Լիսաբոն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Արդիւնագործութեան բաժանմունքը յայտարարում է բոլորին, որ 1904 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Պարիզում տեղի կունենայ առողջապահութեան, ջրախեղդների ազատութեան, սպորտի, ձկնորսութեան և վիրաւորների օգնութեան միջազգային ցուցահանդէս։ Լիւտտիխում (Բէլգիա) 1905 թ. ապրիլին տեղի կունենայ միջազգային ցուցահանդէս։

ՍՕՖԻԱ։ Ազգային ժողովի նիստը այսօր չը կայացաւ մինիստրական շարունակվող կրիզիսի պատճառով։ Իշխանը նորից յանձնարարեց Դանեվին կաբինէտ կազմել։ Հաւանականօրէն կը մնայ հին կազմը, բացի Պապրիկովից, որի տեղը կը բռնէ գնդապետ Սավովը։

ԱԹԷՆՔ։ Զինուորական մինիստր Լամբրիտոսը պալատի այսօրվայ նիստում յայտնեց, որ հրաժարվում է իր պաշտօնից։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՏԱԴԻՐ ԵՄ ՏՊԱԳՐԵԼՈՒ ԵՐԿՈՒ ԳԻՐՔ հանգուցեալ Ալ. Արարատեանցի հեղինակութիւններից՝ «Սուտ ճգնաւոր» երկրորդ տպագրութիւն և «Անսէր ամուսնութիւն» առաջին տպագրութիւն, որի համար խնդրում եմ հանգուցեալի յարգողներին օգնել գրքերիս տպագրութեանը։ 1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ"
Ժողոված հանգուցեալ բժիշկ
ԳԷՈՐԳ ԱԽՎԵՐԴԵԱՆԻ
Հրատարակութեամբ օր. ՄԱՆԷ ԱԽՎԵՐԴԵԱՆԻ
Խմբագրութեամբ «Ազգագրական Հանդէսի»։
Շքեղ տպագրութեամբ, 550 մեծադիր երեսներով։
Գինն է առանց ճանապարհածախսի 1 ր. 50 կ.
Դիմել Եր. Լալայեանցին, Тифлисъ, Саперная № 5.

Հանգուցեալ բժիշկ Ախվերդեանի դուստր՝ օր. Մանէ Ախվերդեան «Հայ Աշուղների» հրատարակութիւնն ամբողջապէս նուիրել է «Ազգագրական Հանդէսի» խմբագրութեանը, իսկ բժշկականութեան վերաբերեալ իր հօր հարուստ մատենադարանը նուիրել է Կովկասեան Բժշկական ընկերութեանը։ 2—4

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Զունենալով միջոց վճարելու որդուս ուսման վարձը, որ սովորում է Թիֆլիսի երրորդ գիմնազիայի I դասարանում, դիմում եմ բարեգործ անձերի օգնութեան։ Որդուս համար մինչև այս մարտ ամսի 20-ը հարկաւոր է վճարել գիմնազիայի վարչութեան 20 ռուբլի, հակառակ դէպքում վարչութիւնը կարձակէ նրան ուսումնարանից։ Որդիս գիմնազիայի ընդունակ և լաւ սովորող աշակերտներից է։ Խնդրում եմ վճարել 20 ռուբլի III գիմնազիայի վարչութեան առաջին դասարանի աշակերտ Թ. Մ-ի համար։ 2—3

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ

Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական ընկերութեան շինութեան մէջ Հաջի-Իզմայիլօղլու այգիներից ԾԱԽՎՈՒՄ ԵՆ պտղատու ծառեր—խնձորենիներ, տանձենիներ, դեղձի ծառեր և այլն, երկու տարեկան և երեք տարեկան։ 2—3

Լոյս տեսաւ
ԱՆԻ ՔԱՂԱՔԻ
Ստէրէօսկոպիական պատկերների ժողովածուի
Ա. մասը, 50 պատկերներից բաղկացած
Լուսագրիչ Ա. ՎՐՈՅՐ

Պատրաստված է երկու տեսակ. 1) ամենաընտիր պրոտալբինի թղթի վրա և գեղեցիկ տուփի մէջ ամփոփված գինը 15 ռուբլի. 2) Ալբիւմինի թղթի վրա, առանց տուփի, գինը 12 ռուբլի։

Գնել կամ տեսնել ցանկացողները թող դիմեն՝ Թիֆլիսում «Գուտտէնբերգ» գրավաճառանոցը. Բագւում Ս. Յարութիւնեանի գրավաճառանոցը։ Այս հասցէին պէտք է գրեն նաև պատկերների նմուշներ ստանալ ցանկացողները՝ Ա. Վրոյրին յանձնելի, ներփակելով 3 հատ 7 կ. մարկա։ Արտասահմանից ևս այս հասցէին դիմել՝ առանց մարկաների։
(ե. չ.) 5—5

Բերված են Լագոդեխից Թիֆլիս և ծախվում են «ԱՇԽԱՏԱՆՔ» ընկերութեան տնկարանից
ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ
1—8 տարեկան, արտասահմանի և տեղական տեսակներից՝ դիմել Աֆրիկեանին Пушкинская ул. магазинъ Меликъ-Бахтамянца. 8—10

ԵՂԲ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆՆԵՐԻ
Հանդերձախանութում
ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Կանանց վերնազգեստներ, այն է գէյշաներ, սակեր, կիսասակեր, ժակէտներ և պելերիններ, որոնք կարված են բերլինեան ամենավերջին տարազով և դէկադէնտական ճաշակով։ Ստացված են նոյնպէս կանանց շրջազգեստներ—մետաքսից և մուարից։

Նոյն տեղում ստացված է մեծ քանակութեամբ տղամարդկանց և երեխաների պատրաստի հագուստներ։ Ընդունում ենք նաև մեր սեփական կտորներից ամեն տեսակ պատուէրներ, որոնք ստացված են արտասահմանի և Ռուսաստանի ամենայայտնի գործարաններից։ Գների կողմից չունի ոչ ոք մրցող։

Գոլովինսկի պրօսպ. I-ին գիմնազիայի հանդէպ։ 7—10

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԼԷՕ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
Առաջին հատոր
(477+VIII երես, 14 պատկերով)

Ամբողջ գործը, որ գրական-կենսագրական մի մանրամասն տեսութիւն է, բաղկացած կը լինի ԵՐԵՔ հատորից, իւրաքանչիւրը մօտ 500 երես, զարդարված ԲԱԶՄԱԹԻՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ (կը լինեն «Մշակի» աչքի ընկնող աշխատակիցների պատկերները)։

Առաջին հատորը բաղկացած է երկու մասից. I) Արծրունիների տոհմը. II) Գրիգոր Արծրունու ուսանողական տարիները (գրական գործունէութիւն մինչև «Մշակը»)։ Երկրորդ հատորը մամուլի տակ է։

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բաժանորդագինն է երեք հատորի համար ԵՐԵՔ ՌՈՒԲԼԻ, ճանապարհածախսով ՉՈՐՍ ռուբլի։ Կարելի է վճարել և մաս-մաս, այն է 2 ռուբլի բաժանորդ գրվելիս, իսկ մնացածը՝ երկրորդ հատորը լոյս տեսնելուց յետոյ։

Նրանք, որոնք կամենում են ունենալ գրքերը կազմերի մէջ, վճարում են ՄԻ ՌՈՒԲԼԻ երեք կազմի համար։ Դրսի քաղաքներից կազմած օրինակներին բաժանորդ գրվողները պէտք է աւելացնեն ճանապարհածախս 20 կոպէկ՝ պոստային փաթեթի համար։

Հատորները առանձին-առանձին չեն ծախվի։ Բոլոր երեք հատորները լոյս տեսնելուց յետոյ, գինը կը բարձրացնվի։ Վերադիր վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է. 1) Հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը և 2) «Գուտտենբէրգ» գրավաճառանոցում, Լօրիս-Մելիքեան փողոց։

Օտար քաղաքացիները դիմում են. Тифлисъ, Редакція «Мшакъ»։

ԲԱԳՒՈՒՄ բաժանորդ կարելի է գրվել պ. Գրիգոր Տէր-Յովհաննիսեանի մօտ, Ա. Մատուրովի գրասենեակում և «Պրոմէթէուս» գրավաճառանոցում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ՆԱԴԵԺԴԱ"

Ծովային, գետային եւ ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան եւ գոյքերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՈՒԻՆ

Հիմնական դրամագլուխը . . . . . 1,650,000 ռուբլի
Պահեստի դրամագլուխը . . . . . 2,664,808 »

I. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 800 գործակալութիւններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխութիւն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելութիւնը եւ յանձնումը կատարվում է թէ տանը եւ թէ պահեստներում ու խանութներում։

Յանձնումն բեռների ուղարկվողների կողմից առաջարկված պայմաններով (վերադիր վճարներ ի հաշիւ ուղարկողների, դրամի փոխադրութիւն (переводъ) բեռները յանձնելու տեղը հասցնելու համար եւ այլն)։

Պահպանութիւն բեռների արտօնեալ պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրելով նրանց պահեստներում, որի համար շատ կէտերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

II. ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ)։

Բեռնակիր եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցութիւն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Ռիբինսկից մինչեւ Աստրախան, եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաընդարձակ պահեստներ Նիժնիում (սիբիրական նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բագւում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատաբար ուղարկելու համար ընկերութեան շոգենաւագնացութիւնը համաձայնութիւն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյութիւն ունի առանձին, բացառիկ արտօնութիւններով, համաձայնութիւն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխութեան ընկերութեան հետ։

III. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.

ա) Ապահովագրութիւն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային ճանապարհներով (ծովերով և գետերով)։
բ) Ապահովագրութիւն կրակից ամեն տեսակ գոյքերի։
գ) Ապահովագրութիւն ամեն տեսակ դժբաղդ դէպքերից ճանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցիստերնների։
դ) Ապահովագրութիւն թանգագին իրերի և արժէքաւոր թղթերի, որոնք ուղարկվում են պոստով, ցամաքային և ծովային ճանապարհներով, համաշխարհային պոստային դաշնակցութեան բոլոր կէտերի մէջ։

Ապահովագրութիւններ ընդունվում են ինչպէս վարչութեան, այնպէս էլ ամեն տեղ ընկերութեան բոլոր գործակալութիւնների մէջ։

Բացի տեղափոխութեամբ պարապող գործակալութիւններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի մօտ 350 գործակալութիւններ։

Ս. Պետերբուրգի «Նադեժդա» ընկերութեան վարչութիւնը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտէյսկի պրօսպէկտի վրա, № 10-րորդ տանը։

Լիազօրներ—ծովային շոգենաւագնացութեան համար՝ Բագւում, գետային շոգենաւագնացութեան համար՝ Նիժնի-Նովգորոդում։

Թիֆլիսի գործակալութիւնը—Դվորցովայա փողոցի վրա, վրաց ազնուականների տանը։ Տելեֆօն № 108
(ե. ա. կ.) 50—120

Дозволено Цензурою. Тифлисъ, 18 Марта 1908 г.

Электропечатная Груз. Изд. Т—ва, В.-Ванкская ул.